

«Հայկական ժամանակ» օրաթերթի 22.03.2011 համարից տեղեկանում ենք, թե իբր քվեարկության ավարտից 2 ժամ առաջ Արմավիր քաղաքի տեղամասերի շրջակայքերից հեռացվել են թեկնածուներից մեկի կողմնակիցները, և 16 տեղամասերում 2 ժամում քվեարկել է մոտ 4 հազար մարդ՝ տեղամասում ընտրելով 2 ընտրող:

Թյուրընկալումից խուսափելու համար հարկ ենք համարում տեղեկացնել, որ որևէ թեկնածուի վստահված անձ տեղամասային կենտրոններից չի հեռացվել, իսկ դրանց շրջակայքում խմբվելը ՀՀ ընտրական օրենսգրքով արգելվում է:

Ինչ վերաբերում է այն կամայական վերլուծությանը, թե 2 ժամում քվեարկել է մոտ 4 հազար մարդ, ապա նշենք, որ քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ երկժամյա պարբերականության վիճակագրություն չի վարվում: Ընտրական օրենսգրքի համաձայն տվյալներ քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ հրապարակվում են երեքժամյա պարբերականությամբ, և որևէ մեկը չէր կարող ստուգել, թե երկու ժամվա ընթացքում քանի ընտրող է մասնակցել քվեարկությանը: Եթե դա արվել է թեկնածուներից մեկի վստահված անձանց կամ կողմնակիցների միջոցով, ապա կարելի է մեկ անգամ ևս համոզվել վերը բերված մեր առարկությունների ճշմարտացիության մեջ: Իսկ իրականությունը հետևյալն է. 8.00-ից 11.00 քվեարկությանը մասնակցել էր 2 615 ընտրող, 11.00-14.00՝ 4 535, 14.00 - 17.00՝ 3 447, 17.00-20.00՝ 3 562 ընտրող, իսկ ընդհանուր առմամբ ընտրություններին մասնակցել է 14 159 ընտրող:

«Առավոտ» օրաթերթի նույն օրվա հրապարակման մեջ նշվում է՝ ԿԸՀ նախագահ Գարեգին Ազարյանը «Առավոտի» լրագրողի հետ զրույցում ասել է, որ զբաղված է, և բոլոր հարցերի պատասխանները լրագրողը կստանա ԿԸՀ լրատվական ծառայությունից:

Կարծում ենք՝ իրողությունը ճիշտ ներկայացնելու համարձակությունը լրագրողի կարևորագույն հատկանիշներից է, մինչդեռ տվյալ դեպքում համոզվում ենք դրա բացակայության մեջ: Իսկ իրականությունը հետևյալն է. աշխատանքային հագեցած օրակարգի պայմաններում անձնական բջջայինին ստանալով լրագրողի հեռախոսազանգը՝ ԿԸՀ նախագահը հետաքրքրվել է, թե արդյոք վերջինիս պահանջը թողնել ամենը և անհապաղ պատասխանել իր հարցին տեղավորվում է լրագրողական էթիկայի կանոնների մեջ, և եթե այո, ապա պատրաստ է պատասխանել բոլոր հարցերին: Լսելով բացասական պատասխան՝ ԿԸՀ նախագահն ընդամենը խնդրել է կապ հաստատել ԿԸՀ մամլո ծառայության հետ և պայմանավորվել պարզաբանումներ ստանալու համար: